Պարույր Սևակ

Մեր լույսերը

Մաքսիմ Տանկին

Ես չեմ տեսել Մինսկը քո, ինչպես դու՝ իմ Երևանը,
Բայց մեզ նման՝ նրանք նույնպես մերձ ու մոտիկ հարևան են:
Ես չգիտեմ՝ իմ հայկական տուֆ քարից չէ՞ քո տունն արդյոք,
Բայց իմ տունը կառուցված է բելոռուսյան շինափայտով:
Մեր գինին չէ՞ ձեզ խինդ բերում իրիկնային գինարբուքում,
Մեզ քո երկրի դուստրը չքնաղ, հաճախ նա՛ է մատրովակում:
Նո՛ւյն երազը մարմնավորվող, նո՛ւյն առօրյան, ավյունը նո՛ւյն,
Նո՛ւյն անբաժան ճանապարհն է մեզ դեպի լույս հեռուն տանում:
Իսկ լույսե՛րը... Ինչ փույթ՝ մեկը իր ծնունդը գետից առել,
Իսկ մյուսը՝ մեր Սևանի պաղ կոհակն է կրակ դառել:
Մեր լույսե՛րը, կրակնե՛րը... Ամբողջ գիշեր նրանք անքուն
Հեռվից իրար ձայն են տալիս, իրար անխոս արձագանքում:
Իսկ մեր երգը նույն լույսը չէ՞, որ խոսքեր է միայն հագել...
Ու ես երգով, լույսերի պես, ուզում եմ քեզ արձագանքել:
Լույսերի պես թող մեր երգն էլ ապրի այն լուրթ հեռաստանում,
Ուր այս ահեղ ու մեծ դարի ճանապարհներն են մեզ տանում:
Այնտեղ արդեն ո՛չ միայն մենք, մեր Մինսկն ու Երևանը,
Այնտեղ արդեն ո՛ղջ աշխարհը ո՛ղջ աշխարհի հարևանն է: